Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի ղեկավար Բրյուս Ադամսոնի բաց նամակը ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին

Բաց նամակ՝ ի աջակցություն Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առաջարկվող փոփոխության առնչությամբ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) լիիրավ անդամ է: Մարդու իրավունքների պաշտպանին լիիրավ անդամակցության կարգավիճակը շնորհվել է մի շարք միջազգային չափանիշների հիման վրա, որոնց թվում է Մարդու իրավունքների ազգային անկախ հաստատությունների (NHRIs), ներառյալ՝ երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում հստակ մանդատին առնչվող օրենսդրության առկայությունը:

Հաստատության ֆինանսական անկախությունը, դրա պատշաճ և հետևողական ֆինանսավորումը և միջոցների առկայությունը նշված չափանիշների ամենակարևոր բաղադրիչներից են, որոնք կոչված են ապահովելու հաստատության գործառնական անկախությունը և արդյունավետությունը:

Այս համատեքստում Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի բյուրոն առանձնակի մտահոգված է Հայաստանի կառավարության կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող փոփոխությամբ, որը նախատեսում է, որ յուրաքանչյուր տարի Պաշտպանի հաստատության ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Հիշեցնում ենք, որ ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքները, այդ սկզբունքների և «Մարդու իրավունքների անկախ ազգային հաստատությունների դերը երեխայի իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում» թեմայով ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի 2-րդ ընդհանուր մեկնաբանության (2002), հատկապես՝ 10-րդ և 11-րդ հոդվածների հիման վրա **կազմված ENOC–ի չափանիշները լայն մանդատ ունեցող հաստատության համար նախատեսում են պատշաճ ֆինանսավորման պահանջ, ներառյալ՝ երեխաների իրավունքների պաշտպանության համար, որը հնարավորություն է ընձեռում ազգային հաստատությանը ունենալ անձնակազմ, տարածք և գործառնական կարողություններ Կառավարությունից անկախ լինելու և անկախության վրա ազդող ֆինանսական**

վերահսկողությանը ենթակա չլինելու համար: Ազգային հաստատությունների մանդատը և լիազորությունները բովանդակազուրկ են կամ դրա իրականացումը սահմանափակ է, եթե ազգային հաստատությունները չեն տիրապետում իրենց լիազորությունների արդյունավետ իրականացման և գործունեության համար անհրաժեշտ միջոցների:

Մարդու իրավունքների պաշտպանին հատկացվող ֆինանսական միջոցների կրճատման արգելի երաշխիքի վերացումը պարունակում է հաստատության հսկայածավալ աշխատանքների իրականացնումը վտանգելու ռիսկեր բոլոր ոլորտներում, հատկապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում (այդ թվում՝ մշտադիտարկում, «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի իրականացում, երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով բողոքների քննարկում, երեխաների խնամք իրականացնող կազմակերպություններում պարբերական այցերի կատարում, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրների վերաբերյալ հատուկ զեկույցների հրապարակում, իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում, երեխաների իրավունքների վերաբերյալ վերապատրաստման դասընթացների կազմակերպում և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված գործողություններին մասնակցություն):

Մենք առանձնապես մտահոգված ենք այն կանխատեսելի ազդեցությամբ, որը հաստատության ֆինանսական և գործառնական կարողությունների հնարավոր կրճատումը կունենա երեխաների իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում Պաշտպանի աշխատակազմի՝ որպես Հայաստանում ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի իրականացման մշտադիտարկման մարմնի նկատմամբ: Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսական կարողությունների կրճատումը կամ այդ հարցում անկանխատեսելիությունը լուրջ վտանգ է ներկայացնում հաստատության ինստիտուցիոնալ անկախության համար և սահմանափակում է Պաշտպանի ներուժը ամբողջությամբ գործադրելու հնարավորությունը:

Ավելին, հաստատության վերաբերյալ օրենսդրության էական փոփոխությունը կամ այնպիսի զարգացումները, որոնք կարող են ազդել հաստատության անկախության կամ արդյունավետության վրա, կարող է վտանգել Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցում Պաշտպանի հաստատության լիիրավ անդամակցությունը՝ իջեցնելով կարգավիճակը, ինչպես դա նախատեսված է Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի կանոնադրությամբ: Թեև ընդունում ենք, որ տարբեր երկրներում տնտեսական միջոցների հասանելիությունը տարբեր է, խիստ կարևոր է, որ փոփոխության որոշման հարցով նախապես խորհրդակցեն Մարդու իրավունքների պաշտպանի և բոլոր համապատասխան շահառուների հետ և այդ գործընթացը իրականացվի թափանցիկ և ներառական ձևով: Պետական իշխանությունները բոլոր հանգամանքներում կրում են լիարժեք պատասխանատվություն ապահովելու այն բոլոր միջոցները և երաշխիքները, որոնք անհրաժեշտ են Մարդու իրավունքների պաշտպանին իր մանդատը միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելու համար:

Ելնելով վերոգրյալից, կոչ ենք անում վերանայել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի գործող 8-րդ հոդվածի 5-րդ մասում փոփոխություն նախատեսող որոշումը, որը կարող է ազդեցություն ունենալ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անկախության, արդյունավետության և գործառնական կարողությունների վրա:

Հարգանքով՝ Բրյուս Ադամսոն

Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի ղեկավար,
Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի Բյուրոյի կողմից